ԱՄՆԻ ԿՈՆԳՐԷՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԿԻՐՈՎԱԿԱՆՈՒՄ

ԱՄՆի Կոնգրէսի ներկայացուցիչ Բարբարա Բաքսրը, որը Կոնգրէսի Մարդու Իրաւունքների յանձնաժողովի անդամ է, Հ.Յ.Դ. Միացեալ Նահանգների Արեւմտեան շրջանի Հայ Դատի կենտրոնական յանձնախմբի նախաձեռնութեամբ այցելել է Հայաստան։

Սեպտեմբերի 1ին տիկին Բաքսրը եղաւ Կիրովականում։ Նրան ուղեկցում էին ԱՄՆի Արեւմտեան շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ ընկ. Վահագն Պետրոսեանը, ԱՄՆի Սախալինի անուան Մարդու Իրաւունքների յանձնախմբի ներկայացուցիչ պրն. Դեյվիդ Լեոպոլդը, «Ասոշիէյթըտ Փրէս» գործակալութեան թղթակից պրն. Մորտեն Ռոզենբլատը եւ Աւետարանական եկեղեցու երկու ներկայացուցիչներ։

Նրանց դիմաւորեցին Հ.Յ.Դ. Կիրովականի կազմակերպութեան ներկայացուցիչ ընկ. Է.Ղաբուզեանը, ՀՕՄի Կիրովականի ներկայացուցիչ Մ.Գալայչեանը, ՀՕԽի ներկայացուցիչ Ս.Մաթեւոսեանը։

Հ. Յ. Դ. Մամլոյ եւ Տեղեկատու Գրասենեակում տիկին Բ. Բաքսրը հանդիպեց Կիրովականում հանգրուանած ադրբեջանահայ փախստականներին, նրանցից լսեց ճշմարտացի պատմութիւնն այն արհաւիրքի, որը կատարուեց հայերի հետ՝ Ադրբեջանի տարածքում։

Ստորեւ ներկայացնում ենք նրա տպաւորութիւնները, որ նա ուղարկել է Ամերիկա։

Կիրովականի քաղաքապետի ձեռքերը լիքն են, շատ լիքը

Այս 175000անոց քաղաքը շատ է տուժուել 1988ի երկրաշարժից։ 400 ընտանիքներ տակաւին մնում են անպատսպար։ Ընտանիքների մեծ մասը ապրում է շէնքերի մէջ, որոնք դեռեւս կանգուն են, բայց շատ տկար - թեկնածու են յաջորդ ողբերգութեան։ Ադրբեջանական հանրապետութիւնից փախստականներ լցւում են Կիրովական՝ խուսափելով անպատմելի հալածանքից եւ ապրում են գաղթականներում, իրենց կեանքի ամբողջ կուտակածը յետեւում թողած։ Եւ ապա, կայ դէպի դրամատիրութիւն անցումը, որով քաղաքապետը շատ խանդավառ է, բայց միաժամանակ ընդունում է, թէ չունի մի յստակ ծրագիր։

Դրանց վրայ հարկ է զումարել այն, որ Կիրովականի քաղաքապետը շուտով պիտի կորցնի Կիրովականի քաղաքապետի պաշտօնը. ոչ այն պատճառով, որ ժողովուրդը չի սիրում իրեն - ընդհակառակը, այլ որովհետեւ ժողովուրդը ուզում է քաղաքի անունը փոխել։ Կիրովականը կոչուել է մի բոլշեւիկի - Կիրովի - անուամբ, որը Լենինի կողքին էր յեղափոխութեան ընթացքում։ Ստալինը արժեզրկել էր նրան, բայց Խրուշչովի օրով նա վերարժեւորուել էր։ Ոչ եւս։ Ինչպէս որ Երեւանում երեք ամիս առաջ Լենինի արձանը վայր բերուեց, այնպէս էլ Կիրովն է լինելու։ Քաղաքը փոփոխուելու է մի նոր անուան համար։

Հայերը հպարտ են նրանով, որ իրենք սկսել են համայնավարութիւնը ջնջել յեղաշրջումից երեք ամիս առաջ։ Նրանք մի ջերմ եւ շնորհալի ժողովուրդ են, որոնք ունեն ահռելի հպարտութիւն եւ ներքին ուժականութիւն։ Նրանք նաեւ շատ են տանջուել իրենց պատմութեան ընթացքում - յատկապէս Օսմանեան կայսրութեան օրով, որը իշխում էր Թուրքիայում։ Հարիւր հազարաւորներ ըսպանուել էին։ Նրանք ապրել են ցեղասպանութեան փորձառութիւնը։

Դժբախտաբար, հայերի նկատմամբ մարդկային իրաւանց բռնաբարումները շարունակւում են Ադրբեջանում։

Սախարով հիմնարկից մի մարդու եւ Ասոշիէյթըտ Փրէսից մի թղթակցի հետ, ես Կիրովականում լսեցի իրենց պատմութիւններից մի քանիսը։

«Երեսուն դիմակաւորուած մարդիկ խուժեցին իմ տունը, հրաձգենները մեր վրայ ուղղած,- ասաց մի 55ամեայ կին։- Իմ երեք զաւակները եւ հարսները այդտեղ էին եւ մենք շատ վախեցանք։ Նրանք մեզ ասացին, որ դուրս գանք իրենց երկրից։ Տանս մէջ ամեն ինչ կոտրտեցին։ Փախուստ տուինք՝ ոչինչ չվերցնելով եւ երբեք յետ չենք գնալու»։

Բազմաթիւ ընտանիքներ նկարագրեցին այն ինչ կոչում են «պոգրոմներ» - մի բառ, որը լսել էի իմ մանկութեան. զինեալների շրջուն խմբեր, որոնք կրակում են, բռնաբարում եւ սարսափեցնում բնակչութեանը։

Արդէն իսկ 200000 հայեր, որոնք ապրում էին Ադրբեջանում հարիւրաւոր եւ հարիւրաւոր տարիներ, ստիպուած են եղել դուրս գալու 1988ից ի վեր։

Արդեօք ձախողուած յեղաշրջումը լաւացնելո՞ւ է, թէ վատացնելու Ադրբեջանում ապրող հայերի դրութիւնը։ Դժուար է ասել։ Շատեր ասացին, թէ յեղաշրջման դրդիչները նոյն անձերն են, ովքեր թոյլատրել են հայերի նկատմամբ բռնութիւնները Ադրբեջանում։ Ուրիշներն ասացին, թէ առնուազն «անկախ» մէկը կայ, ում կարող են դիմել, որքան ալ տկար։

Հաւատում եմ, որ շատ լուրջ բռնութիւններ կարող են տեղի ունենալ երբեւէ, եւ այդ պատճառով առաջարկեցի ՄԱԿի ուժեր բերել Ղարաբաղ։ Մի հայ մարդ ասաց. «թող Աստուած լսի ձեր խօսքը»։

Ամբողջ զրգռութեամբ ու ժողովրդավարութեան խոստումներով հանդերձ, մարդկային իրաւանց բռնաբարումները շարունակւում են։ Խորհրդային բոլոր հանրապետութիւնները պէտք է սովորեն. կարելի չէ իսկական ժողովրդավարութիւն ունենալ, եթէ մարդկային իրաւունքները չեն յարգւում ամեն մարդու համար։